

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐ ԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՅՁԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մայիս 13

Թիւ 95 — ԻԲ

هزارايداق غزوة

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ՏԻՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար

50 Դր.

Գաւառաց համար

60 ,

Արասահման

15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մրցման ոգին

Դեպի Այեմսաղի (Մայիսի 6օրեր)

Ծովուն քաղ...

Բնութիւնն ու կիւնը (հերթում)

Իսկային հասած (Վիպակ)

Տես եւ գործ. Մանկավարժութիւն

Իմաստասիրութիւն

Ամուսնալոյծն՝ ապերջանիկ

Բ. Պ.

ԹԵՂԻԿ

Ս. Յ. ԳԸԼԸՃԵԱՆ

Մ. ԹԱՊԱԳԵԱՆ

Ս. ԲԱԲԵԼԵԱՆ

Մ.

ԹԱՓԱՌԻԿ

40 փարա 40

ԳԱՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ.—Անոնք որ կը փափաքին բաժանորդ գրուիլ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ, կըրնան ուղղակի դիմել Խմբագրութեանս, կամ Հանդէսիս Պատ. Գործակալներուն, որոնց միջոցաւ կ'ընդունին իրենց թերթերը.

Նիկոմիդիա.—Մեծ. Ներսէս էֆ. Խաչատուրեան

Սամառ.—Մեծ. Մանուէլ էֆ. Տիլպերեան

Պարսիակ.— « Մելքոն էֆ. Յովսէփեան

Մարգար.— « Աւետիս էֆ. Կիւլպէնկեան

Ատարազար.— « Ստեփան էֆ. Սափրիչեան

Առաւել.— « Յակոբ էֆ. Խաչատուրեան

Երզնկա.— « Դաւնիկ էֆ. Ճիզմէճեան

Իզմիր.— « Կարապետ էֆ. Մալէճեանեան

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԳՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Ջալայիէ հասցեսի Թիւ 61

1900

Է Բ Ի Թ Ա Պ Լ

(ՄԻՍՏՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՈՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՅՐԱՆՔ



1898ին՝ Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/₄ ՄԻԼԻՈՆ Ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ Ֆրանսական ՄԱՅՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնել]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ գործառնութիւն ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ պահեստի դրամ ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻՏ ԸՆԺԱՅԵԼ կեանքի ապահովագրութիւնը՝ որքան Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ.:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՔ

Լոնտոն

Անգղիոյ պանքա

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրեաթի Լիոնէ

ՆԵՐԿԱՅՈՅՈՒՅԻՉ ԹՈՒՐԻՈՅ

ԳՍՈՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պահճէ Գարու, Անանիատի Խան

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

Պ Օ Զ Ա Ճ Ե Ա Ն

Գին 4 դրու

Լոյս տեսաւ Ն. Պերպերեան մաքուր տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի տպագրուածը, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ուշադրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապրէ մեծաքանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօմ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասքիէ խան քիւ 1 եւ 2: Ներդաշնակ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, քաւմ դեղերու անհուն պէտքախոսութիւն մը միշտ պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ տեղեւորական համբաւ վայելող Ներդաշնակ բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանձնարար ջուրերը: Դաւաւներէ ետեւ յանձնարարութիւնք ճշդիւ ու փութով կը կատարուին, անմեղելի կերպիւ ածան գնելով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մայիս 13

Թիւ 95 — ԻԲ

ՄՐՅՄԱՆ ՈԳԻՆ



ԵՐ մէջ տուեալորա-
կան միջումը սը-
խալ ըմբռնուած
եւ շահագիտական
խաբէութեան հա-
մանշանակ նկատ-
ուած է դժբաղդաբար:
Ե. Չ. Մեր յիշած զգեստեղէնի
Հայ վաճառատունները, փոխանակ ազ-
նիւ կերպասներու լաւագոյն ընտրու-
թեամբ եւ կարուճելի բարեվայելչու-
թեամբ մրցելու օտարին դէմ, ընդհա-
կառակն եւրոպական հրապարակներէն
կը հաւաքեն տարիներով անվաճառ մնա-
ցած վարդան կերպասներ, եւ ողորմուկ
դերձակի մը ձեւիչին տակ դէզ դէզ
մկրատել տալէ վերջ, նոյնքան ողորմուկ

կարով մը կը մեծարեն ժողովուրդին:
Հապա իրենց սնամէջ պարճանքը, իրա-
րու դէմ չարախօսութիւնը, խանութ-
պանի գուեհիկ ոգին: Սակայն ժողո-
վուրդին ողջամտութիւնն ամէն բանէ
վեր է, մէկ կը փորձէ, երկուք կը փոր-
ձէ, եւ վերջապէս երրորդին նո-
րէն կը դիմէ օտար մեծ վաճառատուն-
ները, ուր բարեձեւութեան հետ քա-
ղաքավարութիւն ալ կայ: Լա՛ւ հասկը-
ուած մրցումը կը կայանայ մատուցուած
սպորանքի մը ազնուութեան ու տոկու-
նութեան հետ ճաշակ ու բարեձեւութիւն
լծորդելու մէջ, — ինչ որ ժողովուրդին
ճաշակին տակաւ ազնուացման պահան-
ջն է: Արուեստագէտ մը իր ճարտա-
րութեամբ, իր հնարիմացութեամբ մի-
այն կարող է մրցիլ ուրիշ արուեստա-
գէտի մը դէմ. արուեստ արուեստի
դէմ, ճարտարութիւն ճարտարութեան
դէմ, ճաշակ ճաշակի, բարեձեւութիւն
բարեձեւութեան դէմ, ահա ճշմարիտ
մրցումը:

Վերջին ժամանակներս կեսարացիք,
ի բնէ աշխատասէր ժողովուրդ, գորգա-
գործութեան ձեռնարկեցին: Իրենց հան-

րածանօթ ճեճիմներէն (վարագոյր) վերջ, որոնց որակը տարուէ տարի ստորնացունին խօլ ու խելառ մրցմամբ, իրենց բոլոր թափով գորգագործութեան վրայ ինկան, և իրենց մետաքսեայ ու բրդեայ սեճնաքներով ողողեցին հրապարակը: Սակայն ցաւ է ըսել թէ կեսարական արտագործութիւնը եւրոպական հրապարակներու վրայ չգտան այն ընդունելութիւն որուն արժանի էին, կամ գէթ շատ վաղանցիկ ընդունելութիւն մը գտան, վասն զի ճշմարիտ արուեստը պակսեցաւ իրենց: Իրարու ձեռքէ կորզելու, իրարու գէմ մրցելու կործանարար ոգիէն թելադրուած, աժան հանելու, աժան ծախելու անձուկէն բռնուած, մոռցան արուեստը, ու սկսան այնպիսի կեղծ, պոռոտ, անդաշն գոյներով, ստորին ու թափթափուք մետաքսներով գորգեր արտադրել, որ ապրանքին որակին հետ արժէքն ալ կոտորեցաւ, առանց մասծելու թէ մետաքս գորգեր գործածելու չափ յառաջացեալ ժողովուրդ մը իր նրբացած ճաշակով պիտի չսիրէր յարգ ընծայել այդ պոռոտ, այդ անդաշն գոյներուն, այդ ստորին, անշահ արտագործիչներուն եւ միշտ ներքին արժէք մը պիտի փնտռէր արուեստական եւ նիւթական տեսակէտով: Ո՛ր պարսկական արուեստը, որ իր դարաւոր համբաւը պահելու կը ճգնի միշտ, եւ ո՛ր կեսարական արուեստը: Փոխանակ հրէական հաշիւներով իրարու հետ մրցելու, աւելի լաւ չէ՞ր որ պարսկական արուեստը մանր ուսումնասիրէին, գոյներու միաւորման եւ դաշնաւորման դադտնիքը սերտէին, ներկելու արուեստին թաքթաքուրին թափանցէին, մեծ վարպետներու գործերէն առաջնորդուէին, քան թէ չա՛տ արտադրելու, չո՛ւտ վաստկելու չահադիտութեան զոհէին արուեստը: Իրենց նպատակը պէտք էր ըլլալ գերազանցել պարսկական արուեստը, անո՛ր գէմ մըր-

ցիլ եւ պարսկական գորգերը վանել հրապարակէն, եթէ կարելի էր: Բայց հիմա հրապարակին վրայ տիրողը դարձեալ պարսկականն է, վասն զի քիչ չատ ճաշակ ունեցող անձ մը միշտ նախապատուութիւն պիտի տայ պարսկական գորգին, որ ներքին արժէք մը ունի արուեստական տեսակէտով:

Գէշ հասկցուած խօլ մրցման մը հետեւանքը չէ՞ր որ Ազգ. Հիւանւանոցին ինպստ հրապարակ հանուած սիկառի թուղթը չկրցաւ համբաւ հանել, եւ ամսէ ամիս, շաբթէ շաբաթ, օրէ օր կորսնցուց: Ժողովուրդն, որ առաջ այնքան սիրալիր ընդունելութիւն ըրած էր, տակաւ իր երեսը դարձուց, վասն զի ձանձրացաւ ալ իր կոկորդը գթութեան զգացման ղոհելէ: Մէկ սիկառի համար կ'արժէ՞ր տասն յուցկի վառել. վառուածն ալ օճի պէս վար կը սողար եւ ծխողին համար անգործածելի կը դարձնէր սիկառը: Աւելի լաւ չէ՞ր որ ձեռնարկուն ընտիր թուղթ մը հրապարակ հանէր, թող քիչ մը սուղ ըլլար, հոգ չէր, եւ պիտի տեսնէր թէ ոչ միայն չայ ժողովուրդն այլեւ օտարներն ալ նախապատուութիւն պիտի տային մեր թուղթին, եւ մեր գթութեան մեծ յարկին հասոյթն օր քան զօր պիտի աւելնար: Բայց հիմա մեռած է, կ'ըսեն, այդ գործ, զերձանի գործին պէս:

Շատ անգամ կը գանգատինք թէ ընտիր դասագրքեր կը պակսին մեզ: Ասոր ալ պատճառը գէշ հասկցուած մրցումը չէ՞: Տարիներով աշխատէ ու լաւ գործ մը արտադրէ, եւ ահա անխիղճ հրատարակիչ մը խկոյն ապիկար հեղինակի մը շինել կուտայ անոր մէկ նմանութիւնը, եւ ստորին թուղթի մը վրայ տպելէ վերջ հրապարակ կը նետէ, մըրցակից կը հանդիսանայ, հարիւրին 30—40 զեղչ կը խոստանայ, եւ կ'ընէ չընե՛ր՝ լաւագոյնը կը վանէ հրապարակէն:

չայ ժողովուրդէն զատ կա՛յ ժողովուրդ մը որ 100 հատը 5—6 դրշնոց քերական ունենայ... եազմայի թուղթի վրայ տպուած: Ժողովուրդի մը կրթական մակարդակը չի՛ կ'ընար չափուիլ իր քերականէն:

Բ. Պ.



ՄԱՅԻՍԻ ՆՕՐԵՐ

ԴԵՊ Ի ԱԼԵՄՏԱՂԻ

ՆՇԱՆ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ



ԼՐԱ գարունը իր կանանց կակաչ խանձարուրին փաթ-
թուած՝ բնութեան վերկեն-
ցադուով խորհրդանշանէ, ու
երբ կիրակի առտուանց նըն-
ջասենեակիս փեղկերը բա-
նալով այգուն լուռ «բարի լոյս»ը կարդա-
արեւելքի ճերմկութիւններուն մէջ, կրնա՞մ
ալ օրս քաղքին միօրինակութեանը մէջ
մեռցնել:

Ու կը գուրգուրամ քմահաճոյքիս վրայ որ
մէկէ՛ն արթնցած է ներսս՝ միս մինաւորիկ
ճամբորդելու: Սրունքներուս կարկինը չի
յուսահատեցներ զիս Ալէմտաղին հետիոտն
չափելէ:

Երէկի անձրեւը Մարտէն բան մը բերած
է հետը: Կը սիրեմ սակայն այս օդը՝ պաղը
չէ ասիկա, հապա կաղդոյրը միսին: Մայ-
րիկա «գիւմպիւլ հաւասի» կ'ըսէ ասոր որ
գետնի փոշիները կը սմբեցնէ, որ արեւը
մաք ոսկիի պէս երկինքի դորշութիւններուն
մէջ կը պտղեցնէ եւ որ կը շողէ խոտի չիւ-
ղերը շաղի չիթերով:

Ետիս կ'իյնան հիմայ զոյգ Չամլըճանները,
եւ առջիս՝ Ալէմտաղիի ուղին, հովէն ծփուն
դեղին ժապաւէնի մը պէս մանեկաւոր զոր
կը խածիծեն դարուփոսերու ընդհատում-
ները: Դէմս սայլեր կ'ելլեն, ածուխի սար-
պուած կառքեր՝ զոմէշներու լծուած: Ո՛ր-

բան կ'ախորժիմ բարեւելով անցնիլս այդ
տրեխաւոր ծերուկ մարդիկը, նահապետա-
կան բան մը կայ անոնց թմրկած անուշ
դիմագիծերուն մէջ ու խթանը ձեռքը սայ-
լին կատարը իրենց նստուածքի՛ն ալ մէջ:

Մուհաճիւր Բէօյիւն եմ: Քանի մը տնուոր
այս գեղը կը պաղչկեցնէ հողիս, նայելով
իւր ճերմակ մինարէին միսթիք սլացքին:
Առհաւատչեան չէ՞ ինք շինականի պարզուկ
հաւատքին, աշտարակուած լեռնաւայրի
այս վեհ անդորրութեանը մէջ:

Ճամբէն դուրս շեղելով՝ կ'սկսիմ դալա-
րիքին մէջէն քալել: Ներքաններուս կոխ-
կըռտուքին տակ՝ ծոթիքին ծաղիկները կը
ճմրթկուին ու իրենց բարկ հոտը կը խրկեն
ռունգերուս: Բուրումն է ասիկա անոտնա-
կոխ ամայութիւններու, վայրի, սուր ու
քաղցր, ինչպէս ամէն բան որ ամայի է:

Բը՛ռ՛ռ՛... արտոյտ մը կը թռչի քովէս
ու կը թափ հունա՛, ցախերու թղուկ հե-
րափունջին վրայ: Քովը, հեռուն թռչուն
մը չեմ նշմարեր: Կը խորհիմ լքուածներուն
որ երգ չե՞ն ունենար կտուցին, վասն զի
մինակ են, ու վերերը չե՞ն պտըտկիր, վասն
զի արեւ չիկայ:

Նա՛, Տուտուրլուն է որ կ'երեւայ բլու-
րին ստորոտը, մինչ աջ դիէս գոցուած կոր-
սուած է ալ լուրթ հեռանկարը Մարմարա-
յին: Անոր տեղ տափաստաններ կ'երկարին

ցախերու և ճարխոտներու որոնց մութ-կանանչը դէպի հարաւ վէտվէտուն՝ կ'երթայ անհետիւ Այտոսի լեռնաշղթային ոտքը:

Տուտուրլուէն քիչ մը վերօք, բլուրին կատարը առագաստէ զուրկ, անշարժ, երկու հողմաղացք, փորուած հանուած աչքերու ցաւագին ապշութեամբ որոնք երկինքին կը նային, եւ որոնց մէջէն երկիւնքը նայի:

Հոս քարուտ է ճամբան, ամէն քայլիս ներքաններս կը ցաւին: Քիչ մը հեռուն, քալած ճամբուս առջեւէն մութ ու անճոռնի բան մը կը շարժի, քարի բեկոր մը որուն ոտքեր փակցուցեր են: Դէպի մացառուտը շեղիլուն՝ կը ճանչնամ զինքը, տգեղ վիզով այդ «կամաց»ութեան կենդանին: Ու կը ցաւի՝ խանգարած ըլլալուս երթը կրիային, ամայի ուղիներու այս մենիկ ճամբորդին: Երբոր բաւական կը հեռունամ իրմէ, ետի կը դառնամ: Կրիան իր թագստոցէն դուրս ելած՝ կը շարունակէ նորէն իր խալիք ճամբորդութիւնը առապարին վրայէն, պարանոցը վախէն վեր բռնած ու շալկած իր քեֆ-ճեփն դատապարտութիւնը:

Բայց ո՞վ գողցաւ հոտ փակցուց ծովի այդ ծաւի ծուէնները. ի՞նչ են ատ քանի մը կապուտիկ քառակուսիները հիւսիսի ձորերուն մէջքին սաւանուած: Քթանի արտե՞ր: Դուք տեսա՞՞ք էիք: Ա՛յնքան նկարչային բան մը կայ այս կապոյտին մէջ որ կը կենամ եւ երկա՞ր ատեն կը լուամ նայուածքս այս եթերային գոյնովը: Ո՛չ մէկ ծաղիկ բնութեան մէջ ատոնց չափ անուշ, բայց անո՛ւշ կապոյտով մը: Սիրոյ կապոյտն է ասիկայ որ պիտի թափի, ճերմկի պիտի վաղը միւս օր, քթանին պանալութեանը անցնելով:

Անտառի մուտքս...: Ա՛խ, ինչո՞ւ աչքին վայելքը, աչքին ցանցին առած լոյս-նկարը չի կրնար վրձնել սա գրիչը: Տարուան մը կարօտը եկած եմ առնել այս անտառէն: Նոյն կանանչ ստուերն է որ ծառերուն դաւար պսակէն մինչեւ վար, մինչեւ խորի թաւուտքները կ'երկարաձգուի: Տերեւները

լիսի թորքէ անցնելով թափանցկացած, մուսիքն օր սուաի բեզեսա երանգներ առած են: Նոյն կաղնիներն են նորէն, յաղթ, նկարչային կաղնիները, մէկ հասակ, մէկ տարիք, որոնց բունին՝ բլուսէ կարկտաններ փակցուցած է մամուռը, Ալէ՛մտաղիի մամուռը...

Հոս, կանանչներու այս պանծալի ապարանին մէջ՝ որ պոօսե անհամար երդիքներ ունի, ամէն ոստ թաւ մը եղած է եւ ամէն թառի վրայ կիթառ մը լարուած, ճուրճ՝ ճուրճ՝ ճա՛փ ճա՛փ...: Երջանի՛կ խայտառներ, կեանքերնիդ ամբողջ ե՞րգ է մի:

Ներսերէն կկու մը կը հծծէ: Խորդ քոյրն ասիկա լեզուանի թռչուններուն, ու իր երգը Յաւի՛ն ձայնն է, տխուր, ընդհատ ու կերկեր:

Ո՛րքան տոգոհ կը մտնեմ գիւղ: Անտառի խորհուրդներէն, ծիծաղներէն գերյադեցած ու գիւթուած անոր գարուն-յայտնութիւններէն՝ կ'սպասեմ որ գեղը հմայաթափ ընէ զիս իր պոռոտ ուրախութիւններովը:

Սխալած եմ, գրեթէ ամայի է ան: Կնձնի մը բունին կապուած եզ մը կայ որ կը ծամծմէ ծուլաբար, կաթ լորձունքը չըրթունքին: Կամացուկին սրճարանը մէկ երկու հոգի, նոյնչափ ալ Աստիկին: Յուրտը պատուհաններուն ետին գամած է օդափոխութեան եկողները:

Յորեկուան ճանճրոյթէս վերջ անտառ կ'երկնամ վերստին, այս անգամ ուրիշ անցքով մը: Անըջանքս ամբողջ ատոր ներսն է: Սիկառս կը միայ բերնիս անկիւնը, կ'որլըրուիմ՝ կոյս թաւուտներէն, ամէն քայլիս՝ սրունքներս կը թաղուին պտերներու լայն հովանոցներուն մէջ: Հոս ու հոն կաղնիներ կան որ աղուոր մը ծռած են քովիներուն վրայ: Կ'զմայլիմ այն անուշ եղբայրութեան վրայ զոր բնութիւնը ծառի՛ն ալ կուտայ եղեր ասանկ հաճելի խոնարհումներով:

Ձոր մը կայ առջիս ուսկից վար կ'իջնեմ: Գետինը, մոլաբոյսերու ցանցառ թնճուկին մէջ՝ հերուան տերեւները ա՛լ փտած, ոս-

նած, կը խշրտան ոտքիս տակ: Մորենիի ճիւղերու խենթ գրկուածքին տակէն ջուրը կ'անցնի ճշլալով, միօրեաներու երամակ մը կը բզկայ վրան: Երկաթէ փողրակ մը ձորին մէկ դիէն միւսը նետուած՝ կը յիշեցնէ ինծի Միւթէվէլիի ջուրի ճամբան: Փողրակը պզտիկ մը ծակած է սակայն, ջուրը մէջէն վեր վեր կը թռի ֆսալով ու չորս դին կը սրսկուի մարգարտի փսորտութներով: Գետնի տերեւները կը դողդղան ու կը ջնարակուին այս ջրցայտքէն՝ դիւթական բաց-կանանջով մը:

Տխուր skfon մը՝ ձորամէջի այս առոյգ

բուսականութեան մէջ ինչպէս սպրդած՝ կուգայ ցաւցունել հոգիս: Երիտասարդ մըն է մոխրի պէս տփգոյն որ կը հազայ ու «ինքզինքը մտիկ կ'ընէ» ապալած կաղնիի մը բունին յենած: Հիւանդոտ մը, այո, ափսոս, վասն զի տեսայ դեղհատ մը կլլելը գրպանէն հանած կլոր պզտիկ տուփէն առնելով:

Ա՛տ տարիքին, դեղէն, ջուրէն, օդէն իր կենդանութիւնը սպասողին՝ վա՛խ...

30 Ապրիլ 1900

Ալէմսաղի

ԹԷՈՒԴԻԼ ԼԱՊԱՆՔԱՆ

Ծ Ո Վ Ո Ւ Ն Տ Ա Կ . . .



ԻՕՐԻՆԱ՛կ, խուլ ձայնական կտորտութներ՝ աղջամուղջի մրոտ քօղին խորքը քուքող Սեւ Ծովու ձիւնաթոյր փրփուրներուն մէջ ձաղկելով, կը յօրինեն խորհրդաւոր բան մը... օրօ՛ր մը համակ:

Ու ծովը կը մրափէ՛...

Մայիսի ծոցէն հափհափուած դարնազայր գեփիւռի փուրձ մը կ'ոգեւորէ փուխտ մթնշաղի մի քանի վայրկեանները... ու մերթ Ընդ մերթ ըմբոն իր վէտվէտալի նազանքներուն, կը սուլէ՛ ու կը խանդարէ լուսթիւնը գերեզմանացած...: Եւ սակայն մարդկային հոծ խուժանը մո՛ւշ մո՛ւշ կը նիրհէ մեղամաղձոտ օրօրով...:

Մահաշո՛ք լուսթիւն... գիշե՛ր:

Աշնանամուտի առաջին գիշերն է այն, թօնուտ աղջամուղջով մը, կուռ, սեւ բլշակով մը ծածկուած՝ որ իր թովջալի ծալքերուն տակ կը խոկա՛յ, ինքն իր մէջ հիւծելով, հատնելով...:

Ու նրբահիւս ամպիկներ խառնուելով արշալոյսի ցոլքերուն, գերդ ահեղ որբաներ, մէտ առ մէտ հրաժեշտ կուտան գիշերին...:

* * *

... Եւ ալ լուսցած է...:

Լուսցած է... բայց ո՛ւր է մեղանոյշ գեփիւռը, ո՛ւր հոսանուտ մթնշաղի լուրթ քօղին տակէն մուտացող առիւծին օրհասականի վերջին մրմունջը...: Բստմեկի հանդարտութիւն մը մնացած է միայն... արեգն իր սուիններովը տիրապետած է անոնց, տիրապետած է եւ Հերային...:

Երկնահամարը, իր արեգակովը պանծուն, ա՛լ յորդ հրսորներ կը պողթկայ վար:

Ա՛հ, սոսկալի՛ տապ...: Զատուկ ոգի մը գոգցես վերընձիւղելով թմրեցուցած է ա-

մէն ինչ... : Ո՛չ մէկ մարդ, ո՛չ մէկ անասուն հանդուրժելու քաջութիւնը ունեցած է այդ հոգի տապին՝ որ ալ կը խտանայ Միջոցին մէջ...

— Ակո՛ր աղա, աս ի՞նչ տաքութիւն է. տակաւին այս տարիքիս մէջ այսպէս տաքութիւն տեսած չունէի... : Աստուծոյ ի՞նչ ըրինք որ... :

— Է՛, է՛, ամօթ որ յիսուն տարի նաւավարութիւն ըրած ես եւ այս տապին օղբեւորք ըլլալը չես գիտցած... :

Տա՛նկ... տա՛նկ...

— Բայց այս ատեն ի՞նչ կը նշանակէ սա զանգակին ձայնը... :

— Օ՞՞Փ. Ժողովուրդը եկեղեցի կը հրաւիրեն Աստուծոյ աղօթելու համար, որպէս զի այս տապին առջեւ առնէ. գիտե՞ս, շատ անգամ այսպիսի սոսկալի տապերուն փոթորիկներ կը յաջորդեն... :

Ու խառնիճաղանձ բազմութիւն մը կը շտապէր եկեղեցի... :

Ա՛հ, այս ամէնը սիճեմաքօկրաճ մը սակայն... :

* * *

Փա՛շէշ... , Փա՛շէշ... :

Մահահոտ, պնդուող սոյլով մը ա՛լ կը կողկողի Սեւ Ծովը. փաղաղիչ կոհակները իր ծանծաղ ակերտուն վրայ կը փռուկին... ու վերտացող շխրտուք մը մարդուս սիրտը կը ճանկէ՛ ալ :

Սառն քամի մը առիւծի պէս կ'ոռնայ Միջոցին մէջ, գոգցես պա՛ր մը, խա՛ղ մը մարդկային աղկիոններուն հետ... : Սոսկալի պաղ շնչառութիւն մը իր անել ծալքերուն խորը կ'ուրուագծէ մօտալուտ աղէտի մը ահաւոր պատկերը... :

* * *

— Քա՛ ինչո՞ւ կուլաս, ատ կարմիր թուղթը ի՞նչ է... :

— Ա՛խ, աղջիկս ու փեսաս նաւակով մը ինձ կուգան, ճամբան են, հեռագիր առի, օ՞Փ, պիտի խեղ... դու... ի՛ն... :

... Ու ծովը անխղճօրէն կը շարունակէ իր ձիւնաթոյր բաղխումները նետել էին օգնութեան կառչող հէք հոգիներու գլխուն... :

Պահ մը քանի՞օն երջանիկ էին անոնք... :

* * *

Նա՛ւ... նա՛ւ...

Մինչ ձկնորսական խուժան մը՝ կործերու նման մէկ մէկ սեւ կէտերու շուրջ խռնուած՝ հեռա՛ Երեսմայի աղաղակով մթնոլորտը կը խլացնէր, յանկարծ մարդկային երամ մը ընդհատեց անոնց զբաղումը... :

Ծովուն վերապը դիմող նաւակ մը տեսնելով վազած եկած էին անոնք... :

Հազարի մօտ բազմութիւն մը ժողովուած է ծովափը. «նա՛ւը, նա՛ւը» կը կանչեն լոկ եւ ալ ոչի՛նչ... : Ո՞ր քաջը, ո՞ր ալպիոնը պիտի խիզախէր այդ արհաւիրալի ջրաթումբերը խորտակել եւ աղատել ռօզնութի՛ւն, օգնութի՛ւն աղաղակող եղկելիները :

— Թողէ՛ք զիս, թողէ՛ք որ թռչիմ ազատելու համար փեսա՛ս, աղջի՛կս... :

Միակայմ, պատուտած առագաստով նաւակը կը մօտենար նաւահանգստին... բայց ահա ղեկը կը խախտի իր ծխնիին վրայ, նաւը իր ճամբան կը կորսնցնէ ու կը դիմէ դէպ նհանգը... սեպածեւ խարակները... :

* * *

Ա՛խիս...

Սարսուղի հառաչ մը յանկարծ խեղդուեցաւ անգութ ջուրին ալքերուն տակ. կատաղի մարմին մը քանասարաբար ընկուղեցաւ մութ, փրփրադէզ քառսին խորը... Ո՞վ էր այն, ձկնորսի մը սրտոտ կինը. — եղկելիներուն մայրն որ ամէն ինչ արհամարհելով, քեցելով ու մոցելով յաջողա՛ծ էր ծովը նետուիլ... :

Ապառու՛մ հո՞ծ բազմութիւն մը դեռ անտարբեր կը դիտէր այս ամէնը :

Մայրը, անձնուրացութեան մարմնացո՛ւմ, խիզախած էր դէպի աղէտքը, եւ ծովուն անյատակ անդունդին տակ ուղած էր թաղուիլ իր սիրելեաց, դեռափթիթ ամուլին հետ :

Թիբեայօլու

ՍԻՐԱԿԱՆ.Յ ԳԵԼԸՃՅԱՆ

դուք ինծի շատ աւելի ծանօթ էք որքան անշուշտ չէք կարծեր... ձեր տաղանդը ճանչցայ գիշեր մը... ձեր նմանները խիստ հազուադիւս են... բայց աս ըսածներուս գործնական ապացոյցը պէտք էր տուած ըլլայի մինչեւ հիմա... մինչդեռ մէկ թերութիւնս դարմանելու համար առիթին սպասելու խոհեմութեանս մէջ երկրորդ թերութիւն մըն ալ գործեցի... ա՛խ, եթէ դիտնաք թէ որքա՛ն զգացած եմ այսօր... անխոհեմ խոհեմութենէն աւելի մեծ անխոհեմութիւն չըլլա՛ր...

Վահէ մտիկ կ'ընէր առանց մեծ բան հասկնալու:

Նորէնոֆ լռեց անդրադառնալով թէ իր յուզման մէջ անտեղի բաներ էր սկսած խօսիլ: Փորձեց քիչ մը ամիսփիւր միտքը: Անկարելի եղաւ: Ու զգալով որ իր այս ծայրայեղ շփոթութեան մէջ չպիտի կրնար կարգը իր բուն ըսելիքին բերել, ձեռքը գրպանը տարաւ, դուրս հանեց նամակը: Վահէի կարկառեց: Պատրաստուեցաւ բան մը ըսել, բայց յանկարծ զօրաւոր կերպով յիշեց թէ տասը վայրկեանէ ի վեր տունը չէ՛ր...: Ֆիմի՛ն, սակա՛յն, Ֆիմի՛ն, արդեօ՛ք, ի՞նչ...

Եւ յիմարական տենդով մըն էր որ ըսաւ սա քանի մը բառերը:

— Ես պէտք է որ երթամ... շուտ տուն երթալու եմ ես... այս նամակը ձեզի կը վերաբերի, Վաւախ, առէ՛ք...:

Ու սեղմելով Վահէի ձեռքը սառ ձեռքով մը որ կը դողդղար, կառքը մտաւ խօլական աճապարանքով մը:

— Շո՛ւտ, շո՛ւտ, հրամայեց կառավարին:

Կառքը սրընթաց գլորիլ սկսաւ:

Սեմին վրայ քարացած մնաց Վահէ, բա՛ն մը չկրնալով գուշակել այս եզակի այցելութենէն: Ու սպասեց դեռ հոն աչքը պաղած կառքին վրայ որ կը հեռանար...

Կառքը դարձաւ, հեռուն՝ փողոցին մէջ:

Այն ատեն Վահէ նշմարեց որ ձեռքին մէջ նամակ մը

ունէր: Հաղիւ կրցաւ յիշել թէ Նորէնոֆն էր զայն իրեն յանձնողը:

Ներս մտաւ: Ու տկար եւ յամր քայլերով վեր՝ իր սենեակը ելլալով պատուեց պահարանը:

Սիրտը վախու մէջ էր, ի՞նչ արդեօք, ի՞նչ պիտի գըտնար...

Յանկարծ տարօրինապէս շուարեցաւ: Շտապով քանի մը քայլ առաւ դէպի դուռը: Ծրար մը պանքտոմս ելաւ հոնկէ: Իր յուզումին ու աճապարանքին մէջ փոխանակ իրեն վերաբերուած նամակին՝ իր արժէթուղթերուն ծրարը յանձնած ըլլալու էր: Պէտք էր հիմա շուտ դուրս ելլար, կառքին ետեւէն վազէր, հասնէր եւ ուղղէր սխալմունքը:

Դուռը դեռ չը բացած՝ անգամ մըն ալ թուղթերուն վրայ նայեցաւ: Գրուած թուղթ մը աչքին դպաւ է՛ն վրան դըրուած: Բացաւ:

«Ազնիւ Վահէ,

«Տաղանդի մը զարգացման միջավայրին պակասը նշմարել, այդ պակասը լրացնելու կարելիութիւնը ունենալ ու կոյր, խուլ ձեւանալ, այս բանը ոճիրէ աւելի մեծ յանցանք մըն է:

«Այսպէս չէր իմ պարագաս երբ զձեզ շատ աւելի յառաջացած տեսնալու մեծ բաղձանքէս կը հալածուէի ու չէի ձեռնարկեր զայն իրագործելու: Մենք դեռ չենք վարժուած մեր իղձերը գործադրելու բնականութեանը: Նախապաշարութի պէս բան մըն է ասիկա որ մեր գործելու արիութիւնը կը կապէ ու խորհելու ազատութիւնն ալ կը քօղարկէ, այնպէս որ կը դադրի այդ իղձը գիտակից ըլլալէ:

«Ես որ գիտեմ թէ ի՞նչ յարգանքի ու գուրգուրանքի արժանի է ձեզի պէս մէկը, ինքզինքիս դէմ արգահատանքով մը լեցուած կը ներկայացունեմ այսօր ներփակեալ ար-

Ժէթուղթերը որ պիտի ծառայէ քակելու ձեւ հանճարին թռիչին կապերը, իմ տաղանդաւոր բարեկամս...

«Հաճեցէք ընդունիլ զանոնք եւ գացէք... Եւրոպա գացէք, ձեր երազը, ձեր կոչումին միջովայրը եղող փոստը... վախճանը, ու երեւան հանեցէք ձեր ներսը պահուած հրաշալի մարդը»

«Մի' նեղուիք երբեք ինչ ինչ նկատումներով : Ես այսօր էն մեծ ուրախութեանս հետ է'ն ալ մեծ տխրութիւնս ունեցայ երբ նշմարեցի որ ատանկ բարձր ելքի մը առաջնորդող կարելի միջոցը այսքան անարժան է ինքնին : Որովհետեւ անխրաւութիւն, գձձութիւն է որ մարդը ու իր ճակատագիրը, իր տաղանդը իսկ դրամին ձեռքը խաղալիք եղած ըլլան : Պիտի ուղէի ես որ այդ միջոցը իր մէջ մարդկայնութիւն պարունակող բան մը, անձնութիւն մը ու նենար :

«Յաջողութիւն, Վահէ, յաջողութիւն... Մեկնէ', որքան որ շուտ կրնաս... Տողերուս մէջէն ձեռքդ կը սեղմեմ, հիացումով ճակատդ կը համբուրեմ... երթաս բարով...»

«Նորէնոֆ»

Նամակը աւարտած, սկսաւ Վահէ այս անհաւատալի նամակին նայիլ զարմանքով ու անկէ այդ անճշմարտանման թուող թղթադրամներուն :

Դարձեալ կարդաց նամակը, տասը անգամ, քսան անգամ նորէն կարդաց :

— Ի՞նչ համեստութիւն, միմիջեց ամէն անգամուն, ի՞նչ բարձր հոգի, ի՞նչ եզակի մտածում... ասանկ գաղափար մը ինքզինքին թելադրել գիտնա՛լ, միա՛կն է այս անձը մեր մէջ, միա՛կը...

Բայց ալ ի՞նչ կը պակսէր իրեն, ահա : Ինչո՞ւ համար ասանկ վայրկեանի մը մէջ կը մնար վհատ ու սիրտը սեղմուած

— Կը տեսնամ, ահա, դուք ալ զիս չճանչցաք... է՛հ, տարիէն աւելի կ'ընէ սակայն...

Վահէ զգաց յանկարծ իր ամբողջ արիւնին դէմքին վրայ խուժելը... ճանչցաւ...

— Դ՛ուք... ըսաւ միայն ու հոն մնաց ապշահար ու գոշահար :

Վահէ չէր հասկնար նախ թէ ի՞նչպէս եղած էր որ տակաւին կարճ ժամանակ մը առաջ երիտասարդ երեւոյթով այդ մարդը հիմա ասանկ կ'ըսէ, ծերացած էր : Բայց իրեն ուրականային յուզում պատճառող բանը այս մտածումը չէր : Հապա սա մտածումը թէ ինչո՞ւ եկած էր Նորէնոֆ մինչեւ իր տունը : Առջի գիշերը նշմարուելո՞ւն նորէն արդեօք եկած էր իրեն տալու աւելի բուռն, ջախջախող հարուած մը : Ի՞նչ պիտի կրնար ըսել, ի՞նչ արդարացում ընել... պէտք էր օտքերը իյնար... պէտք էր ներողութիւն գոչէր... հաւտացնէր թէ ալ չի՛ պիտի երթար ան կողմերը, ալ վերջին անգամն էր այս... թէ ալ իր հոգին ծերացած էր, թէ տղայութիւն էր ըրածը, գէշ նպատակով ալ չէր ըրած...

Ակնթարթի մէջ այս մտածումը այնպէս իր վրայ ճնշել սկսաւ որ Վահէ զգաց ծունկերուն կթոտիլը : Դուռին կըրթնեցաւ չիյնալու համար :

— Ներեցէ՛ք իմ քիչ մը առաջուան խօսելու անքաղաքավար, կոպիտ կերպիս համար, սկսաւ խօսիլ Վահէ գրեթէ շնչասպառ, ու հազիւ պիտի համարձակէի որ ներէիք մանաւանդ իմ... ես... ամէն... այսինքն... բայց, հրամանեցէք :

— Ատենը ուշ է, զաւակս...

«Զաւակս...»

Վահէ չունչ առաւ :

— ... Զեզի բան մը յանձնելու համար եկած էի... Շատո՞նց, խի՛ստ շատոնց պէտք էր որ եկած ըլլայի հոս...

ՀԱՆՐԱՓԻՍԱԿ

Մեղմօրէն դուռը զարնուեցաւ :

Դալկադէմ եւ դժկամակամ՝ Վահէ պատուհանը երթալով, խոփող դիմադծութեամբ սկսաւ դուրս նայիլ :

Ծերունի մարդ մը կառքէն իջած՝ կ'սպասէր դրան առջեւ :

Նորէնոֆն էր :

Վահէ չկրցաւ ճանչնալ ու պատուհանը բանալով :

— Ո՛վ կ'ուզէք, հարցուց սրտեղ :

Նորէնոֆ քիչ մը Վահէին նայելէ ետք՝

— Կը ներէ՛ք, ըսաւ յուզուած ձայնով եւ վարանոտ շեշտերով, ա՛յս է արդեօք Պ. Վահէին բնակարանը :

— Ա՛յս է, այո՛. բայց ըսէ՛ք, կ'աղաչեմ, ո՞վ կ'ուզէք, ի՞նչ կ'ուզէք... :

— Եթէ հոս է ինքը, ըսաւ Նորէնոֆ՝ ապշած այս խիստ ձայնով արտասանուած խօսքերէն, հաճեցէք իմացունել իրեն որ վայրկեան մը բարեկամի մը երեւնալու շնորհքը ընէ :

Տարօրինակ ազդեցութիւն մը ըրին Վահէի վրայ տըրտմածայն այս խօսքերը քաղաքավար : Անմիջապէս վար իջաւ. դուռը բացաւ, ու,

— Ես եմ, պարոն, ըսաւ քաղցրօրէն, ե՛ս եմ Վահէն...

— Ա՛հ... ըրաւ Նորէնոֆ շփոթած ու Վահէն դիտելով ապուշին ուշադրութեամբը, դո՞ւք էք... Վահէն դո՞ւք... այո՛, կը յիշեմ կոր... կը ճանչնամ կոր... ճիշտ է... դո՛ւք էք Վահէն... որքա՛ն փոխուած...

Ու դեռ քիչ մը նայելէ ետք փոխուած այդ դէմքին,

— Կը հասկնամ, կը հասկնամ... ո՛վ գիտէ ի՞նչ թանկագին զբաղում մը ունէիք վերը... Ներեցէ՛ք ինծի՝ ձեզի անհանգիստ ընելուս...

— Բայց ի՞նչ կ'ըսէք, ընդհակառակը պէտք էր որ ես ձեզմէ ներողութիւն խնդրէի... միայն թէ ձեր դէմքը չեմ կրնար կոր...

Ինչո՞ւ միայն նամակին գաղափարներուն դէմ հիացիկ կը մնար ու կտոր մը խկ չէ՛ր յուզուեր այդ պանքողոմաներէն, ինչո՞ւ. հիմա չէ՛ր որ պիտի ոտքին տակը առնէր ալ ու ճզմէր այն վհուկը, դեռ որ իր թեւէն ամրապինդ բռնելով «կեցի՛ր» էր գոչած բրտութեամբ ու մատովը ցուցուցած էր, հեգնական անգութ ծիծաղի մը մէջ, դէպի ե՛տ, ե՛տ այն ճամբան ուրկէ տարիներէ ի վեր քալած էր հասնելու համար այն վայրը որուն իր կեանքին ու հոգիին է՛ն մեծ սիրովը համակուած աչքերը յառած էր... ատենը չէ՛ր ալ որ իր վրէժը անկէ պիտի առնէր. ատենը չէ՛ր նաև որ ցաւցնէր բոլոր անոնք որ իր անձը, իր արուեստը ու տաղանդը անարգած էին :

Այս եզրերուն մէջ մինչ արժէթուղթերը իրեն է՛ն խենդ ուրախութիւնը պէտք էին պատճառել, Վահէ կը սոսկար իր վրայ հետզհետէ ծաւալող հանդարտութիւնը դիտելով :

Օրագիրը որ գրեց քանի մը վայրկեան առաջ, դեռ կը մնար բաց գրասեղանին վրայ :

Վահէ այդ տողերուն նայեցաւ :

« Խամբած՝ երաժշտութեան համար ունեցած սէրս ու պաշտամունքս, հատած՝ տաղանդս... »

Ձեռքը ճակտին տարաւ. իրա՛ւ... :

Մոռցե՛ր էր, մոռցեր էր թէ այս տողերը անդիմադրելիօրէն գրած էր...

Նորէն ձեռքը առաւ նամակը. անգամ մըն ալ կարդաց : Յուրտ ծիծաղ մը ունեցաւ սա տողին համար « քակելու համար ձեր հանճարին թռիչք... » Եթէ երբեք թռիչ մը ունեցած էր՝ կապուած չէր ան, այլ քաշուած ու խլուած :

Պաղ կերպով ձեռքը առաւ պանքողոմաները. իր աչքին միայն թուղթ էին անոնք, որոնց դէմ կը վայելէր հիմա դրամին նկատմամբ իր ունեցած բոլոր արհամարհանքը : Ու սկսաւ խորհիլ :

Նորէնոֆի գոյութիւնը իր կեանքին ու ճակատագրին վրայ վճռական ազդեցութիւն մը պիտի ունենար եթէ...

Գրիշը առաւ յանկարծ. պէտք էր գրել այդ համակրելի մարդուն ու բացատրել այդ «եթէ...»-ն: Խորհեցաւ քիչ մը թէ ինչ կերպով պէտք էր սկսիլ. եւ որոշեց յանկարծ.

«Հայր իմ,

«Ներեցէք նախ ինծի զձեզ իմ հայրս անուանելու յաւակնութեանս համար. բայց իմ գերագոյն հիացումս բացատրող ուրիշ բառ չը գտայ, մեծայարգ բարեկամ:

«Վճռած էի թէ հոգեկան յուզումը ալ չգոյ բան մըն էր ինծի համար, եւ ահա ձեր նամակը կը յուզէ զիս. եթէ մեռած իսկ ըլլայի, ոսկորներս պիտի դողացունէին ձեր յղացումը ու ձեր հոն դրած գաղափարները...: Եւ ահա այս վայրկեանիս հոգիիս վրայ կը ծանրանայ ձեզի հետ խօսելու կոչոյ կերպս. աս բանին համար նորէն ձեզմէ ներողութիւն չի պիտի խնդրեմ. այս վայրկեանին այդ վայրկեանը յիշելովս է՛ն մեծ պատուհասը կ'ընդունիմ արդէն:

«Ե՛ն մեծ աղաչանքը զոր ունիմ սակայն ձեզի ընելու՝ այն է որ չը վշտանաք ու չը գայթակղէք ինծի դէմ երբ ըսեմ թէ... ակռաս կը սեղմեմ ահա... պէտք է ըսեմ... թէ՛ ձեր վեհոգի մարդկային գաղափարը թէեւ զիս այսքա՛ն վրդովէ, չի պիտի կրնայ սակայն, աւա՛ղ, իր նպատակին հասնիլ...»

«Յախուռն մտածումի, որոշումի մը հետեւանքը չէ այս վճռական խօսքս: Տարիներու յաջորդութեան մէջ հէք մըտքիս կրած վիճակներէն ինքնաբերաբար գոյացուցուած սոսկալի համոզումն է այս զոր կ'զգամ, զոր կը չօշափեմ, զոր կը տեսնամ այսօր որոշ գիծերով:

«Պէտքը կ'զգամ ահա ձեզի ալ յայտնելու այդ համոզումս:

«Կը հաւատամ ա՛լ թէ ուղեղը իր պահանջած ուղղու-

կին փարիլ, լալ անոր կուրծքին վրայ. ապահովցնել զինքը. «պիտի ապրի՛մ, մայրիկս, պիտի ապրիմ, քեզի՛ համար պիտի ապրիմ» գոչել...:

Ու ձեռքը ճակտին կը տանի սոսկալու համար կարծես քիչ մը առաջուան սեւ գաղափարներէն.

— Ի՞նչ պիտի ընէր, ի՞նչ պիտի ըլլար երբ ալ վաղը զիս չունենար իմ խեղճ սիրելի մայրիկս՝ որ զիս ունի միայն աշխարհքին վրայ զինքը կեանքին կապող...:

... Մութը սկսած է տիրել արդէն. հովը միշտ կը փչէ սաստկութեամբ:

Վահէ կ'սկսի պտըտկիլ սենեակին մէջ, գերագրգռուած թափով մը սա՛ խորհրդածութիւնները ընելով:

— Ուրեմն թագուն ու խորհրդաւոր բան մը կայ միշտ որ յուսահատի մը, կեանքէն գանա՞ծ յուսահատի մը տակաւին ապրելի կը ներկայացնէ այդ կեանքը. ուրեմն վատեր, ապիկարներ չե՛ն անո՛նք որ, թշուա՛ռ՝ դեռ կ'ապրին, դեռ կրնա՛ն ապրիլ...: Անոնք մէկը ունին իրենց մօտ կամ հեռուն, սիրելի մը, բան մը որոնց համար ա՛լ պէտք է որ ապրին: Ինքնասպանները չե՛ն ունեցած կամ չե՛ն կրցած զգալ այս բանը. իրենց ըրածը աղտոտ անձնասիրութեան մը գործը պիտի ըլլար ան ատեն: Եւ եթէ Վէրթէր կարենար մտածել թէ պիտի կրնա՛ր Շառլօթ իր վիշտէն մեռնիլ իրմէն ետքը ինքզինքը պիտի ենթարկէ՞ր այդ ճակատագրին...: Օ՛հ, պէտք է ընեմ ես այն ամէն բաները որոնք պիտի տարի մը աւելի ապրեցնեն մայրիկս...:

Որոտումի խաբկանքը տուող կառքի մը թաւալումին խուլ աղմուկը, որ դուրսէն լսուիլ սկսաւ այս պահուն, խղճեց Վահէի խորհրդածութիւնները:

Աղմուկը մօտիկցաւ. թաւալումը դանդաղցաւ ու կառքը կանգ առաւ տանը առաջքը:

ՀԱՆՐԱՓԻՍՏԱԿ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԻՄԱՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՂՈՒՆ Բ.

ՀՈԳԻՆ ԵՒ ԻՄԱՑԱԿԱՆ ԿՍԵՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԸՄԲՈՆՈՒՄ (Perception)

(Շարժականությունը և թիւերը)

Ըմբռնման միջոցաւ է որ մեր հոգին ծանօթութիւններ կ'ստանայ: Այս ծանօթութիւններէն, կամ լաւ ևս գաղափարներէն (notion, idée) մեծ մասը մեր մտքին կը հասնին զգայարանքներուն միջնորդութեամբ: Ահա այս գործողութեան նախագահող կարողութիւնն է բուն ըմբռնումը, կամ առաջին ըմբռնումը:

Այս երեւոյթ դեռ անծանօթ է մեր տղայի բնութեան համար: Ընտանի, սովորական օրինակ մը կարելի եղածին չափ յըստակապէս պիտի բացատրէ զայս: Զանգակ մը կը շարժի. օդին մէկ թրթռումը կը թընդացնէ մեր ականջին թմբուկը. գործարանին վրայ եղած տպավորութիւնը (impression) մ'է այս: Լսողական ջիղն անկէ կ'ընդունի շարժում մը, երբեք մը, զոր կը հաղորդէ ուղեղին, և միտքն անով կ'իմանայ. ասիկա զգայութիւն (sensation) մ'է: Ինչպէս կը կատարուի այս անցքը ուղեղէն մտքին, մէկ նիւթէն միւսին. — ոչ ոք գիտէ զայն տակաւին: Սակայն ինչ որ ալ ըլլայ, միտքն իմանալով՝ անմիջապէս կը գործէ իր յատուկ բնութեան զօրութեամբ, կը դիտէ, կը ճանչնայ զանգակին ձայնը, և ասիկա ըմբռնում մ'է: Նոյն և համանման եղանակաւ է որ միւս չորս զգայարանքները կը հայթայթեն մեզ ծանօթութիւններ: Բայց ինչ որ հոս հարկ եղաւ մեզ ըսել շատ մը խօսքերով, մէկ ակնթարթի մէջ, ա'լ աւելի արագ կը կատարուի, յարատեւ կը կրկնուի, կը նորոգուի, և կրնանք ըսել թէ բնագոյնաւ և յանգէտս մեր կը գործէ, և ահա ինչո՞ւ համար չենք կրնար հետեւիլ այս գործողութեան հետ-


քին: Ասկից կը հետեւի թէ այս կերպով ստացուած գաղափար մը նախ՝ պարզ ծանօթութիւն մ'է, տարտամ ու թերի կերպով ըմբռնուած, բայց վերջապէս՝ արտաքին, ֆիզիքական աշխարհի վրայ մեր ունեցած ծանօթութեան սկիզբը, հիմն ա'յս է:

Ահա կը տեսնուի թէ ըմբռնումն ինչ կարեւոր դեր պէտք է կատարէ դաստիարակութեան և մասնաւորապէս ուսման կամ ծանօթութիւններու ստացման մէջ: Հիմա դիւրաւ կը հասկցուի թէ ֆիզիքական դաստիարակութիւնն ինչ ազդեցութիւն կրնայ ունենալ իմացական դաստիարակութեան վրայ, ինչպէս արդէն բացատրած էինք: Դաստիարակը, հինգ զգայարանքները, մասնաւոր տեսողութեան եւ լսողութեան ըզգայարանքները մարդերու համար, ներկայացող ամէն առիթներէն ո'րքան ճիշդ թափէ օգուտ քաղել՝ ա'յնքան քիչ է: Արդ, առիթներն անդադար կը ներկայանան տարրական ուսման մէջ, ուր ուսուցիչը ստիպուած է յաճախ, ինչպէս ցոյց պիտի տանք ընդհուպ, նիւթական առարկաներու օժանդակութեան դիմելու, իր տուած դասին մէջ:

Բայց մեր իմացականութեան ունեցած գաղափարներուն կամ ծանօթութիւններուն ամենքն ալ արտաքին աշխարհէն չեն գար իրեն: Կան շատ մը կարեւոր ծանօթութիւններ ևս որք բնաւ առնչութիւն չունին մեր ֆիզիքական բնութեան և նիւթական առարկաներու հետ, և մեր զգայարանքներուն միջոցաւ չեն հաղորդուած մեզ: Բայց սակայն մենք ունինք զանոնք, Մեր միտքն այդ ծանօթութիւնները կ'ըմբռնէ ուղղակի ինքն իրեն մէջ, կարծես տեսակ մը հոգեկան աչքով զոր մենք պիտի կոչենք հոս ընդհանուր անուամբ ներքին ըմբռնում: Աստուած և իր ստորոգելիք, հոգին, իր կարողութիւնները և իր գործերը, բարին, արդարութիւնը, գթութիւնը, պարտականութիւնները և այլն, ահա այս գաղափարներէն մէկ քանին, որոնց մեծութիւնն ու կարեւորութիւնը կրնաք դասել:

Շար.

Մ.



ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՆՐ

Ե Ր Գ

Պ

(Շար. ԻԱ քիւէն)



ՆՏԱՌԱՐՆԱԿ կնոջ սիրտը էր անբիծ,
Նըման լճակի կոհակներուն ունէր
Ձոր նըկարիչն անգամ կարող չէր
Այդ զիծերէն կամ ծալքերէն խոր
Լ'անել,

Ինչա՛ Տըւփանքն ու Հըրապոյրն բոցեղէն,
Ըզգայ երկիրն իր բռնկիւն կնոջ ոխէն.
— Թաւուտներու խորհրդաւոր սեղաններ՝
Անցեալին միակ էք զերեզմանն մահաստուեր...
Թըռչուններու երգն է զրուած ես կ'ըսեմ,
Տերեւներուն վըրայ միայն մահուան սեմ.
Անտառի կիւնն այդ երգերէն կըզգլխէր,
Վերջալոյսի շողերուն պէս բոցահեր.
Երբ Աըշալոյսն Տիեզերքի Պալատէն
Հուր վարսերով ծածկէր ովկեան ջրեղէն,
Կիւնն՝ լեռներու վըրայ պառկած՝ գերդ Հուրի,
Դիւթէր աստղերն ու երկիրը ամայի,
Գեղեցկութեան զանծերն համայն սըրիւած հոն,
Կը մըրափէր ու կ'երազէր մի Անհուն,
Լեռն ու Թաւուտն կը գինովնան իր սէրէն,
Ժայռերն անգամ դիւթուած՝ երգեր մըրմընջեն.
Աըշալոյսի կուրծքին վարդերն ըսպիտակ,
Կնոջ եղեմն կը պըսակեն ղերդ վըտակ,
Քարայրներէն ժայներ լըսուին սիրերգի,
Ձոր արծազանգը հաւաքէ իբր ոգի,
Սիրոյ անհուն աշխարհին այն լուսեղէն,
Որ եւայի է սըրտին ջահն ապաքէն.
Երազ՝ սարսուռ. ա՛հ, ամէն ինչ կ'անհետին,
Կնոջ մըտքէն որ դեռ կոյս էր պէս գետին.
Աստղի մը պէս կ'ելնէ ծոցէն Բընուծեան,
Սէր կը սըրփուէր ճաճանչի տեղ աննըման,
Իր դէմ մարդ մը ելաւ ժըպտոււն՝ վայրենի,
Որ քարայրի մէջ բընակէր պէս հէնի.
Սիրոյ անեզը անդունդներէն կաշկանդուած,
Դիմէ կնոջ՝ որ կը ճեմէր անծկայրեաց,
Երբ մարդն մօտէր՝ խուսափէր կիւնն խընդալով,
Բայց մարդուն սիրտն հըրդեհած էր ղերդ մի ծով:
Ա՛հ, երկուքն ալ Թաւուտները խըռովեն,
Իրենց անմեղ սիրերգներով բոցեղէն,
Կիւնն մօտենայ ու խոյս կուտայ ղերդ եղնիկ,
Թաւուտներու մարմանդին վըրայ ուր՝ կայ սիւր.
Տըւփոտ անմեղն սարի մը վըրայ մագըլցի,
Հո՛ն կ'երգէ Սէրն՝ Լ'իր կայսրութիւնն պէս բոցի,
Ո՛չ մէկ քերթող, ո՛չ մէկ հանճար անյատակ,

Կընայ նկարել անոր երգի հուր ծովով,
Լեռն ու պուրակ, ծովն Լ'անապատն լուռ ու վսեմ,
Անոր երգին ուճ ղնէին երկնի դէմ,
Սիրոյ ուղիներն զահափժեն անոնց վըրայ,
Հրաբուխի փոխարկեն զայնս՝ ուր կ'ողբայ
Առաւօտը՝ նըստած կապոյտ վըհին մէջ,
Ձոր մենք երկինք կը յըջորջենք խոր Լ'անշէջ,
Բայց չըմոռնանք սիրահար մարդն որ տենչար,
Կեանքի տենչով՝ սըրտի բոցով մըշտավառ.
Մոլեգնոտի ու մազլի վե՛ր ժայռերէն,
Որոնց կատարն պահէր իր Վարդն բոցեղէն.
Լեռն Բնութիւնն՝ երբ ամոլներն խօսէին
Այն ցողաթուրմ Մեծի Տան մէջ մեր երկրին,
Մըրմընջեց կիւնն. «Ի՛նչ է կամարն այս անհուն,
«Ի՛նչ են սա՛ հուր անապատներն՝ մեր զըլխուն
«Վըրայ սլանան երգելով երգ մը քաղցրիկ,
«Քաղցր՝ սոխակի հեշտ երգերէն համակ սիւր.
«Կը Թաւալին ու Թաւալին լերան վըրայ,
«Ինչպէս կոհակն ապառաժին մօտ հըսկայ,
«Շատ անգամ սիրտն զգայ առոնք իրեն մէջ,
«Կարծեմ ինքզինքս հուր երկինք մը մեծ Լ'անշէջ,
«Այս Թաւուտին, այս լերան մէջ երբ կ'երգեմ,
«Անո՛նք ինծի երգ կը ձօնեն սեւ՝ դժխեմ.
«Ապագայի տեսանդները Թըւին.
«Իծածաղներուս մէջ ի՞ծ նետեն հրէշային,
«Ա՛հ, գիտեմ ես Տիեզերքը վերջ մ'ունի...:
«Պուրակներու սօսափիւնէն գինովնամ,
«Յուսահատի՛մ այս բոյլերէն քիւր անգամ.
«Միտքս ժայռերու ահեղ ծոցէն խոյանայ,
«Հըրդեհներու Պետութեան ծո՛ցը հըսկայ.
«Կը խուզարկէ ու կ'երազէ՛ մի Աստուած,
«Պատճառն Բնութեան Լ'իմ սըտիս տխրամած.
«Համայն աշխարհ ինծի համար խորհու՛րդ մ'է,
«Այդ Անմահին զանկէն Թըռած կրակէ.
«Լեռն կ'ուզեմ, այլ սիրտս խօսի Բնութեան հետ,
«Սիրել կ'ուզեմ, բայց սէրն ըլլայ մի աղէտ,
«Միլիոնաւոր տարիներու է աճիւն.
«Այս տիեզերքն ուր՝ կայ արտօսը մահաթոյն.
«Երա՛զ կարծեմ Տիեզերքը ու կուլամ...
«Սոխակին նման աստղերուն տակ խուռներամ,
«Ո՛հ, ապագայ մարդկութիւնը պիտ' յուզուի,
«Տիեզերքի զաղտնիքներովն անծկալի.
«Ըսէ՛, ո՛վ մարդ, ի՛նչ են բոյլերն սա՛ վերի,
«Ուր՝ ամէն օր մէկ մէկ անդունդ կը մարի:»
— Մըրմընջեց մարդն դեռ չեմ գիտեր ու փախաւ,
Անտառներու բաւիղներէն սրարշաւ:

-(Շար.)

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐՁ ԴԱՍԵՐ

—
Գ.

Մեր առաջին դասին մէջ ըսինք թէ ի մաստասիրութիւնը շատ հին գիտութիւն մ'է. ժամանակն եկած է անոր փաստն ու ապացոյցը տալու: Մեզմէ ո՞վ կրնայ համարձակիլ ըսել թէ անհեթեթ ու անբնական են սա հարցումները: «Ո՞վ սեղծեց աւիսաբնի, կամ ո՞ր կէ կուգայ աւիսաբնի, կամ ինչո՞ւ համար սեղծուեցանք, կամ ո՞ր կէ կուգանք կամ ո՞ւր կ'երթանք»: Ուրեմն աշխարհի առաջին օրէն իսկ, մարդս տակաւին ինչո՞վ եւ ինչպէ՞ս հարցումները չըրած, ինչո՞ւն է ուրիշ ըրաւ, և հետեւաբար իմաստասիրութիւնը եղաւ բովանդակ գիտութիւն, իր մէջ ունենալով բոլոր գիտութիւնները. ըսել է թէ մարդս իր մանկութեան օրերուն մէջ իմաստասէր էր քան թէ գիտուն:

Բայց երբ օրեր, տարիներ անցան, ծանօթութիւնները կոեցան ու իրարու հետ կապուեցան, մասնաւոր գիտութիւններ կազմեցին, և այլեւս ըմբռնեցին թէ կրնան իրենց գոյութիւնը հաստատ պահել, իրենց անկախութիւնը պահանջեցին ու այսպէս կազմուեցան նախ ուսողական գիտութիւնք, յետոյ բնագիտութիւն, բնալուծութիւն, բնախօսութիւն ու կենդանաբանութիւն, Հստածներէն կարելի չէ՞ միթէ հետեւեցնել թէ բոլոր գիտութեանց նախածնողն է իմաստասիրութիւնը:

Բանի մը գիտուններ համարձակեցան ըսել թէ, օր մը չէ օր մը սիրտի կործանի իմաստասիրութիւնը. — Ինչո՞ւ. — Վասն զի, կ'ըսէին, իմաստասիրութիւնը իր ծոցին մէջ կը պահէ ծանօթութիւնները անկազմաւոր վիճակի մէջ. հետեւաբար, երբ ծանօթութիւնները կը կազմակերպուին, գիտութիւն անուան տակ դուրս կ'ելնեն ու իրենց անկախութիւնը կը պահանջեն, ինքն ալ պիտի հիւծի, պիտի բարակնայ եւ պիտի հատնի, մանաւանդ անոնց ալ պիտի հակառակի, եւ այս իսկ պիտի ըլլայ իրեն կործանումը և վախճանը:

Կը հարցնենք, ճիշտ է այս վարդապետութիւնը. կը հաւատա՞ք թէ իմաստասիրութիւնը, անզգայ հօր մը պէս, այդպէս լքէ իր զաւակները. յայտնի է թէ ո՞չ:

Արդեօք այդ գիտունները մեզ պիտի չուղղեն նոյն այն ինչուն, զոր քիչ մ'առաջ մենք ուղղեցինք անոնց: Իրաւունք կուտանք մենք անոնց որ ընեն մեզ այդ հարցումները. իմաստասիրութիւնն իսկ կը հակառակի, եթէ զլանանք մենք այդ իրաւունքը անոնց, ու թողունք որ մեծ իմաստասէրներ պատասխանեն անոնց ու ըսեն. երբ բոլոր մասնաւոր գիտութիւնները կազմակերպուին ու այլեւս կազմակերպուելիք իսկ չմնայ, դարձեալ աւարչական և վախճանական հարցումներուն պատասխանը պիտի տայ իմաստասիրութիւնը: Ուրեմն կրնանք ըսել թէ իմաստասիրութիւնը կ'ապրէր, կ'ապրի եւ պիտի ապրի, հսկելու համար բոլոր կազմակերպուած եւ կազմակերպուելիք գիտութեանց վրայ:

Ուրեմն իմաստասիրութիւն կայ, ինչպէս կան նաեւ մասնաւոր գիտութիւններ: Սակայն պէտք է գիտնալ որ միշտ բան մը աւելի կ'արժէ իմաստասիրութիւնը: Գիտութեան հետեւող ենք, գիտական միտք ունինք, իմաստասիրութեան հետեւող ենք, իմաստասիրական միտք ունինք: Լաւ կ'ըլլայ եւ սեղան իսկ է որ տարբերենք կամ զանազանենք այս երկու միտքերը, եւ իւրաքանչիւրն իրեն արժէքին վերածենք:

Իմաստասիրութիւնը, ինչպէս գիտութիւնը, բացատրութեան պէտքէն ծնաւ: Երկու միտքերն ալ հետաքրքրութիւնը կը հետադոտեն եւ ասպացոյց կը փնտռեն, երկուքն ալ քննութիւն ու զննութիւն կ'ընեն. այս բացատրութիւններով ըսել կ'ուզենք թէ երկուքն ալ իրարմէ չեն տարբերիր. ուրեմն մէկ են կամ մէկ մարմին են: Այդպէս է, ինչ կ'ըսէք. եթէ այդպէս է, ի գո՞ւր աշխատեցանք. — Ո՛չ, չյուսահատինք. տարբեր է ու միշտ տարբեր պիտի ըլլայ և միշտ աւելի արժէք մ'ունի, ինչով գիտէ՞ք. — իր առարկայովը: Գիտական միտքը երբ հետաքրքրուի, իր հետաքրքրութեան առարկան զաղափարներու դասակարգ մըն է, և

իր հարցումներն ալ որոշ են թուով : Մինչդեռ իմաստասիրական միտքը գիտականին ըրածը և բան մըն ալ աւելի կ'ընէ . կը հետաքրքրուի, բացատրութիւն կը պահանջէ, նաև այդ բացատրութիւններուն բացատրութիւնը, այսինքն ինչուն երու ինչուն, ամէն բանի խելք հասցնել կ'ուզէ, իրերուն խորը կը թափանցէ, գաղտնիքներու ու խորհուրդներուն խելահասութեան կը յանդգնի, եթէ օրէն է ըսել, «*счастлив он*» է և պնդկող : Գիտական միտքը մասնաւոր առարկայ մ'ունի . իսկ իմաստասիրական միտքը ընդհանուր կամ տիեզերական, աւելի լայն եւ աւելի ընդարձակ առարկայ մ'ունի . նա աղքատ է, իսկ սա հարուստ կամ փարթամ :

Ուշադրութիւն, չըլլայ որ սակայն չափազանց եւ կոյր վստահութիւն ներշնչենք իմաստասիրական մտքին . կրնայ պատահիլ որ զմեզ մոլորեցնէ եւ վտանգներու ենթարկէ, սխալ հետեւութիւններ պարզելով մեր առջեւ, գիտնալով որ շատ բան գիտցողն է որ կը սխալի և ընդհանրապէս ամէնէն տգէտներն են որ ամէնէն աւելի խելացի գործը կ'ընեն, և իր այդ խելացի գործով տգէտը կ'ըլլայ գիտնական եւ մեծ . գործն է որ մարդը կը կաղապարէ, ինչպէս կը պատահի և պատահած իսկ է :

Իմաստասիրութեան ունեցած իր այդ հարստութենէն և կարողութենէն է որ այդ չարածճի գիտութիւնը մասնաւոր գիտութեան մը շրջանակէն դուրս ելնելով՝ կը ջանայ ցոյց տալ գիտութեան մը յարաբերութիւնները ուրիշ գիտութեանց հետ, և նոյն իսկ գիտութեան մը մասերուն իրարու հետ ունեցած յարաբերութիւնները : Ահա թէ ինչո՞ւ համար կան մասնակի իրաւագէտներ և իմաստասէր իրաւագէտներ, մասնակի պատմագէտներ, մասնակի երկրաչափներ և իմաստասէր երկրաչափներ, և թէ ինչո՞ւ համար մին աւելի կարծէ քան միւսը, վերջապէս ամէն գիտութիւն իր իմաստասիրութիւնն ունի :

Հոս ալ դարձեալ գիտուններէն ոմանք, տեսնելով հանդերձ իմաստասիրութեան այս բազմակողմանիութիւնը, ուզեցին անոր չափ շատ մը իրաւունքներ գործ իրաւամբ ունի :


Հսին թէ իմաստասիրութիւնը ենթադրութիւններով կ'զբաղի, հետեւաբար իր դրութիւնները կամ սկզբունքները փորձի ենթարկել անկարելի է եւ ապա ուրեմն անընդունելի : Շատեր ալ ըսին թէ իմաստասիրութիւնը պարզապէս բանաստեղծութիւն է եւ արուեստ . ինչպէս պիտի տեսնուի յետագայ հատուածէն որ Փոնոկրիֆ առած է Ռենանէն . «*Ամէնէն նսեմ և ամէնէն վսեմ իմացականութիւնը իրեն յատուկ եղանակն ունի աշխարհն ըմբռնելու համար* . ամէն մարդ իր մէջ տիեզերքին հայելին ունի . ամէն կենդանի էակ իր երազն ունի որ զինքը կը հրապուրէ, կը բարձրացունէ, կը մխթարէ, ինչ որ ալ ըլլայ այդ երազը, գեղեցիկ թէ տգեղ, տափալ թէ վսեմ, անոր իմաստասիրութիւնը եղած է . — իմաստասիրութիւնը համեմ մըն է որ բոլոր կերակուրները կը համեմէ, բայց ինք առանձինն անունդ չէ» :

Մեծ մարդերուն թող մեծ մարդիկ պատասխանեն : Օկիւսդ Գոնդ կ'ըսէ, գրեթէ հետեւեալ կերպով .

«Գիտութիւնները իրարու մէջ ստորակարգութիւն մը և համակարգութիւն մը ունին եւ հետեւաբար կապ մը . այդ կապը ցոյց տուողը իմաստասիրութիւնն է : Յոյց տուէք գիտութիւն մը որ այդ կապերուն խուզարկութեամբը զբաղի, եւ եթէ գտնէք իսկ, նոր գիտութիւն մը ո'չ թէ ստեղծած այլ գտած պիտի ըլլաք . ցոյց տուէք գիտութիւններու գիտութիւն մը, մի' յոգնիք, արդէն գտնուած կայ և մկրտուած իսկ է . իմաստասիրութիւնն է անիկա» :

Կարծեմ ձանձրացուցինք, ներողամիտ եղէք, խնդրեմ, այս մասին, ա'լ պիտի վերջացնեմ դասը, քանի մը բառերով մէջ բերելով իմաստասիրութեան ուրիշ մէկ սահմանը . «Իմաստասիրութիւնը գիտութիւն մըն է, գիտութիւններուն իրարու հետ ունեցած ընդհանուր յարաբերութիւններուն գիտութիւնը» : Այնքա ալ կ'ուզենք որ և է գիտութիւն մը ուսնիլ . իմաստասիրութիւնն ալ գիտութիւն մ'է, ուրեմն ուսանինք նաև իմաստասիրութիւնը :

ԹԱՓԱՌԻԿ



ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋԱՆԻԿ

Գ Ի Ի Ղ Ա Վ Է Պ

Մասն Ա.

ԽՈՍՏՈՎԱՆԱՏԱՆ ՄԵՋ
(Շար. ԻԱ քիւնց)

Ս. Առաջնորդը իր կարգակիցներուն մէջ, քան զամենսին պերճախօս աստուածաբան իմաստունն ու Հանճարեղն էր եւ մեծ հռչակ ունէր. որքան պատկառելի նոյնքան եւ ամենուն սիրելի եւ մեծարելին էր. Նոյնպէս և իրեն ընկերացող աշխարհականներն ալ իրենց ժամանակաց ու պաշտօնակցաց մէջ թէ՛ ամէնէն աւելի ազդեցիկները և թէ՛ իրենց խօսքը քաղցնող ու իրենց պատուէրները օրէնքի, պատգամի տեղ անցընող անուանի մարդիկ էին. Նա մանաւանդ որ Թագօն առ ոտս Նորին Սրբապետութեան կըրթուած, դաստիարակուած էր, եւ անոր կը պարտէր իր բոլոր փառքը, համբաւն ու տաղանդը, որով ընկերութեան եւ ազգին մէջ յաջողած էր գրաւել պատուաւոր դիրք մը, կարեւոր գործի մը գլուխն անցնել և իր ազգակցաց ամենուն համարմանն ու համակրանացն արժանանալ. Պատկառելի ուսուցիչ ու քարոզիչ Սրբազանին անակնկալ ներկայութիւնը փայլատակածին պէս, ամօթն ու համարձակութիւնը, յոյսն ու երկիւղը սկսան Թագոյի սիրտն ու հոգին ճմլթկել, ճանկուտել. Ան որ ուսանողի պատուաւոր վկայականը խնդրելու համար միայն իր Ս. Հօր Աջն համբուրելու կ'երթար, այսօր իրեւ կնաթող՝ ինչպէս պիտի համարձակէր ապահարզանի անպատուաբեր վճռադիր մը խնդրել. Ուստի, առ ամօթոյն, Թագօ խնդրեց անտեսանելի ձեւով մը դուրս սողաց խոստովանատան դռնէն, գաւթին սկսաւ ձեմել ու մտքին մէջ որոճալ նորեկներու պատահական հարցումներուն դէմ ձեւելիք ծրագիրը. Նորեկները տեղաւորուելէ, հանգչելէ եւ անձնիւրն իր մեծարանաց հարկն ու տուրքը վճարելէ վերջ, հասու եղան բոլոր անցած դարձած բաներուն:

Այս միջոցին Թագօ ներս կը հրաւիրուի, եւ իբր յանցաւոր, ոտքի վրայ, խաչ բարեւ կենալ կը պատուիրուի իրեն, որ զայրանքէն ակռաները կը կրճտէ եւ պոկունքները կը խաժղաւէ, դատապարտեալի մը վերջին պաշտպանողականը հինելով՝ ամէն կողմէ յուսահատ պաշարեալի մը նման, իր վերջին փաստը՝ իբրեւ վերջին ուսմբ՝ նետելով

քանդելու համար թշնամոյն անառիկ ամբողջը:

— Պ. Թագօ, կ'ըսէ Սրբազանը, աշակերտս ես դուն, որ դպրոցին մէջ իբրեւ տաղանդաւոր ուսանող, ընկերոճթեան մէջ ու ընտանեկան սուրբ յարկին տակ ալ օր մը պատուաւոր քաղաքացի մը ըլլալ կը խոստանայիր: Մենք ալ այս յոյսով ու փափաքով շատ մը զոհողութիւններ ըրինք զքեզ խնամով կրթելու: Սակայն կը ցաւիմ որ այսօր մեզմէ ընդունած կրթութեանդ եւ տարրական քաղաքավարութեան, փափկաբարոյութեան եւ ամէն ազնուական ու պատուաւոր վարմանց, ընկերական պատշաճից ու բարեվայելչութեանց բոլորովին ներհակ ընթացք մը բռներ ես: Լսեցի Տէր Տաթեւէն եւ կարդացի խնդրագիրդ. ուշի ուշով քննեցի Տէր Հօր եւ ձեր մէջ տեղի ունեցած բարկ վիճաբանութիւնը, երկուստեք խօսուածները, առաջ բերուած փաստերը, մէջ նետուած առարկութիւնները, զորս օրինաւոր, բանաւոր դատեր էք պսակդ ու ամուսնութիւնդ լուծեալ հռչակել տալու համար. իսկ Տէր Հայրը զանոնք ամենքն ապօրինի ու անբանաւոր դատելով սոյն խնդրոյն մէջ, պսակդ կամ ամուսնութիւնդ անլուծելի յայտարարեր է: Ամուսնալուծումը կրօնական տեսակէտով արդարացնելու համար՝ Յիսուսի վասն պոռնկութեան բանի խօսքը իբրեւ վերջին փաստ մէջ բերեր էք: Լա՛ւ. Թո՛ղ թէ ամուսնալուծում ձեռք բերելու համար, կնոջ նկատմամբ ըրած ամուստանութիւնդ լոկ զրպարտութիւն մ'է, նոյն իսկ եթէ այդպիսի պատահական արկած մը տեղի ունեցած իսկ լինէր, պէտք է իր Յիսուսի պէս ներել եւ ըսել կինդ զըրպարտողներուն. «Ձեր մէջէն ով որ անմեղն է՝ նախ թող ինքն առաջին քարը նետէ», Յիսուս վասն պոռնկութեան բանի կինն արձակել արդարեւ հրամայեց, պոռնկութեան դատապարտումն հռչակելով, սակայն պոռնիկ կնոջ ի սրտէ զղջման ի տես ներելովն ալ հաստատեց թէ մայրերու, քոյրերու սեռն օրինաց ալ առջեւ, կրօնքին ալ առջեւ արժանի է մարդկային գերադոյն գթութեան, կարեկցութեան, երբ իրենց արցունքով և իրենց զղջումով կը լուան, կը մաքրեն իրենց մեղանքին աղտը: Քրիստոս Քրիստոսի դէմ մի՛ հանէք: Ձեր կինն առաքինութեան տիպար մ'է: Աշխարհք արարատ անոր պատուաւորութեան կը վկայէ: Դուն մեր ազգին ընկերական բարձր դասուն կը վերաբերիս. Գայթակղանաց օրինակն երբ բարձրէն տրուի, ժողովրդին մէջ աւելի շուտ ու շատ կը տա-

ըածուի տարախոխիկ ախտի մը պէս: Յիսուս ինքն է որ կ'ափսոսայ աղաղակելով. «Վա՛յ մարդոյն այնմիկ յոյժ ձեռն գայցէ գայթակղութիւնս: Նոյն ինքն Քրիստոսն է որ կը յայտարարէ նաև թէ պէտք է փորել հանել այն աչքը, կտրել նետել մարմնոյն այն անդամը որ կը գայթակղեցնէ: Տէր Տաթեւ շատ ճշմարտօրէն ու կտրճօրէն խօսած է քեզ, պէտք է ամուսնալուծման խնդրագիրդ յետս կոչես, քանի որ կինդ գիշեր ցերեկ իր արցունքներով, իր ողջագուրանքներով, իր քու նկատմամբ տաժած բոլորանուէր սիրով, յայտնած հաւատարմութեամբ, գքեզ պաշտելու չափ մեծարելով՝ կ'ապացուցանէ թէ բոլորովին կասկած, զրպարտանք, չարամիտներու հնարք, դաւ ու խարդաւանանք են ինչ որ իրեն նկատմամբ դուն իբրեւ ամբաստանութիւն ու յանցանք ըմբռնած ու իբրեւ այնպէս ալ բողոքած ես: Խրատ ու խորհուրդ կուտամ քեզ, սիրելի դաւա՛կս Թադօ, որ կոյր յամառութիւնդ մէկդի դնես: Աչակերտութեանդ գրասեղանէն կը ճանչնամ քեզ, որ չափազանց յամառ ես, կասկածոտ, վիճասէր, եւ ա՛յնքան շատ կռուազան որ եթէ մարդ չգտնես քովդ՝ չուքիդ հետ կը կռուիս: Անսա՛ մեր խօսքերուն, որ Աստուծոյ, Յիսուսի եւ Հայրապետաց բերնովը կը խօսինք քեզ: Ամուսնանալէդ առաջ դուն հազար աղջիկ տեսար, և հազարաւոր առարկութիւններով մերժեցիր ամենքն ալ: Այսօր քեզ կին եղող այս աղջկան ձեռքն ալ քեզ պէս եւ քեզմէ թէ՛ նիւթապէս եւ թէ բարոյապէս շատ գերազանց մարդիկ ուզեցին ու ձեռնունայն դարձան: Հազար ու մէկ բժախնդրութիւններովդ հազարին մէջէն գտած ընտրած եւ հօրը մօրը մէկ հատիկ աղջիկն է քու կինդ: Դուն ինքդ հաւնեցար, սիրեցիր ու առիր: Մարդ մուրդ չխառնուեցաւ ընտրութեանդ: Ինքնահաւաքութիւնդ եւ ամէն բանի մէջ ինքզինքդ ամէն մարդէ աւելի խելացի, հեռատես, հասկցող, գիտցող հաւատալու յաւակնութիւնդ ի՛նչեր բերած են գլխուդ եւ դեռ ի՛նչեր պիտի բերեն: Յաւակնութիւնը տգիտութեան նշան է: Տգէտը միշտ կասկածոտ է: Կնոջը մասին ալ այսօրուան կասկածը անոր անմեղութեան մասին ունեցած տգիտութիւնդ լոկ կը յայտնէ: Լա՛ւ է որ քեզ նձան ինքնահաւանները, եսապաշտները, իրենց տան անկիւնը կռնծին միան, քան թէ ուրիշ տուներու հետ խառնուելով՝ անոնց խաղաղութեան ցեցն ու ցաւն ըլլան:

Թադօ ցարդ զսպած, խղճած համբերութենէն պոռթկալով, դիւային ու փրփրուն

համարձակութեամբ մը, լուսնոտի պէս ջղաձգական շարժումներով, աչքերը խելառի մը պէս խոլոր մոլոր՝ պօռաց աւելի քան գոչեց:

— Սրբազա՛ն, ներեցէ՛ք, զիս այդքան մի՛ նուաստացնէք. ես արդար եմ: Կինս մեղաւոր է. պէտք է սպառժուի: Չեմ զրպարտած գինքն. իր բերնովը խոստովանած եւ իր գրով գրած է իր բոլոր յանցանքներն ու դատապարտելի գործերը: Ահա՛ ծոցս է իր ձեռքովը իր յանցապարտութիւնը վճռող վաւերագիրը: Թոյլ տուէ՛ք որ զայն կարդամ: Դուք ալ, աշխարհք ալ թո՛ղ լսեն:

Թադօ քիչ մ'աւելի առաջ գալով, կուրծք՝ կոճակները փրցնելու չափ արտորնօք կը քակէ, ծոցէն կը հանէ իր կնոջ ձեռագիրը, խոստովանանքը կարդալու համար:

Շար.

ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ ՅԻԶՄԻՐ

Շնորհակալութեամբ ստացանք Իզմիրի Ներսէսեան Որբանոցի որբերուն մէկ խմբանկարը, զոր Գործ. Ժողովոյ Դիւանն հաճած է մեզ ալ շրկել: Որբերուն թիւն է (50) յիսուն, որոնցմէ 15ը դերձակութեան, 2ը հիւսնութեան, 2ը մանուսայագործութեան, 1ը վաճառատան մը մէջ սպասարկութեան, 3ը գրաշարութեան կը հետեւին: Մօտերս մէկ քանի հատ ալ գորգագործութեան, կօշկակարութեան, թիթեղագործութեան պիտի հետեւին: Միւսներն առ այժմ դպրոց կը յաճախեն: Պատ. Գործադիր Ժողովն ինպատու Որբանոցին կազմակերպած է պազար մը, որ Մայիս 21ին պիտի բացուի և արժանի է ամէն քաջալերութեան:

ԱԶԴ.

— Մեր զաւառաբնակ Պատ. բաժանորդներէն կը խնդրեմք որ հաճին փութացնել մեզ իրենց վեցամսեայ բաժանորդագիրը, ցկասելով որ «Հանրագիտակ»ի նոր քաջանիւ Ա. վեցամսեան լրանալու համար հազիւ 4 շաբաթներ մնացած են:— Փոք գումարներու համար կ'ընդունուի քղբասարական դրոմ, հարիւրն հարիւր դր. թ հաշուով:

Արտօնատէր. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրու

800 փոքրագույն երեսներէ բաղկացած սիրուն գրքոյ մը, որ 13—14,000 բառերու ու ունեւորու եւ ընթացեալ ասացուածներու հաւաքոյ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքէ տուէ՛ք, վասն իլլալով որ այդ գրքոյ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուշագրութիւն վաճառատան մարման



Որ կը մըցի բոլոր կարի մե-
քնաներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեալի. — Սիրքէճի, Բէօքըճի-
խան, Թիւ 3:

Մասնաճիւղ. — Ղալաթիա, Պէօյլիք Միլ-
լէթ խան, Թիւ 33:

Գնողներու համար վճարման ամէն տե-
սակ զիւրութիւններ:

Հրատարակութիւն Բիւզանդ Մ. Պօզանեանի

ԴՊՐՈՅԱԼԱՆ ԴՐՔՆԵՐ

- | | |
|--|---------------|
| 1. Տեո. եւ Գործնական ֆերականութիւն
աշխարհիկ լեզուի, տարրական ընթացք
80 էրես | Գին
2 Ղրջ. |
| 2. Տեո. եւ Գործ. ֆերականութիւն աշ-
խարհիկ լեզուի, միջին եւ բարձրա-
գոյն ընթացք, 208 էրես | 4 » |
| 3. Ֆրանս. նոր քերական | 1 Կէս » |
| 4. Ֆերականութիւն Ֆրանս լեզուի | 7 » |
| 5. Էքս տը Բառի [200 էրես բառարանով] | 10 » |
| 6. Գրականի Բառագրքոյի Ֆրանսասոյ | 5 » |
| 7. Պատկերազարդ աշխարհագրութիւն | 4 » |

- | | |
|--|------------|
| 8. Սաղմոս խոշորագիր, կիսակաշի [անդիշ] 2 Կէս | |
| 9. Ինքնապաշտպանութիւն գիշական,
գաղղիական եւ միջանցքաբարբառային
ախտերու գէմ | 6 1/2 Ղրջ. |
| 10. Օմ. Քաղ. Օրինագիրք 5 հատոր | 50 » |

ԶԵՂԶ 300⁰

Այս բոլոր գրքերուն համար դիմել Հանրագի-
տակի Տնօրէնութեան:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատ-
կացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան
իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան
համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնը կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 3,250,000

ԱԼԼԷԱՆՁՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԷՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 87,455,645

Ընկերութեանց Դրամատունն է «Քրէտի Լիօնէ»,

ՌԷՆԱՆ-ՎԵՍԹՖԱԼԻԷՆ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի Կլառայախ

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆԵԱԿ.— Ստամպուլ, Հաճօքուլս Խան, Թիւ 53, 54, 55, 56

Լիազօր Ներկայացուցիչ

Գ. ՖԵՐՍՏԵԱՆ



ՌՕՍԻԱ. — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՃ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 յարւոյ մէջ գանձուած ապահովագրին

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մախաւան հին տեղը

Ընդհ. Գննիչ

Ա. ՀԻՒՐՄԻԻՉ

Ընդհ. Դործակալ

ԹԷՈՏՈՐ ՌԷՐԷՆ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Հանրագիտակի վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել Նեան Պերպլեբան
սպարանը, Էսփ զապրիլէ հաստէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ հմբագրութիւն «Հանրագիտակի»